Omysmcfcbp.

623.459
9-94.

623.459
Ֆ-94

ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

ՅԵՐԵՎԱՆԻ ՀԱԿԱՈԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊՈՒՆԿՏԻ ՊԵՏԻ

Հրատ. Յերեվանի Հակաոդային պունկտի

Յերեվան 1934

ՀՍՍՀ—ԽՍՀԱ
Ա. Ա. Մանուկյանի
անվան գրադարան

26 AUG 2013

Պետհրատի տպարան Երևան

Գլավլիտ 585 Պատվեր 1529 Տիրաժ 1000

35-Библиотека
№ 2744
Института
Востоковедения
Академии Наук
СССР

04 AUG 2010

ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

ՅԵՐԵՎԱՆԻ ՀԱԿԱՈԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊՈՒՆԿՏԻ ՊԵՏԻ

Յերեվանի Հակառդային Պաշտպանության պունկտի սահմաններում գտնվող բոլոր խորհրդային, տնտեսական և հասարակական կազմակերպություններին.

Ձնայած զանազան ժամանակներում արված ցուցմունքներին՝ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում հակառդային պաշտպանության վերաբերյալ միջոցառումներ կիրառելու անհրաժեշտության մասին, այնուամենայնիվ դիտողությունը և ստուգումը տեղերում համոզում են Յերևանի հակառդային պաշտպանության պունկտի հրամատարության, վոր բոլոր որդանների և կազմակերպությունների կատարած աշխատանքն այս բնագավառում դեռ անբավարար է:

Խնդիր դնելով վճռական բեկում առաջացնել հակառդային պաշտպանության գործի ամբողջ սիստեմում, պունկտի հրամանատարությունը յուրաքանչյուր ժողկոմի կազմակերպության և այլոց առաջ դրված խնդիրների կատարումը հիշեցնելու նպատակով առաջադրում է ի մի բերած և որենսդրություններով հիմնավորված ցուցմունքներ:

ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Ի. Կառավարության կողմից հրատարակված գոյություն ունեցող օրենքների հիման վրա ԽՍՀՄ իշխանության որգաններին, կազմակերպություններին, հիմնարկություններին և քաղաքացիների վրա պարտավորություն է դրվում ակտիվ կերպով մասնակցել հակաոդային պաշտպանության միջոցառումներին և ամեն կերպ աջակցել Պաշտպանության Ժողկոմատի և նրա հակաոդային պաշտպանության որգանների առաջադրությունների հաջող կատարմանը:

Այդ հիման վրա, բոլոր Ժողկոմատները, հիմնարկությունները, կազմակերպությունները, տրեստները, միավորումները և Ցերևան քաղաքի բոլոր ձեռնարկությունները, վորոնք չեն գտնվում կատեգորիաների յենթարկված որյեկտների թվում (հատուկ ցուցմունքով գործող), պետք է հակաոդային պաշտպանության հարցերն արմատացնեն Ցերևան քաղաքի ադմինիստրատիվ-տեխնիկական- տնտեսական և կուլտուր-կրթական կազմակերպությունների բոլոր ողակների ամենորյա կյանքում՝ նպատակ ունենալով ապահովելու ժողովրդական տնտեսության իրենց յենթակա ճյուղերի անընդհատ գործունեությունը և ադմինիստրատիվ ապարատի աշխատանքը հակաոդային պաշտպանության պայմաններում:

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм. ССР
60013-66

Ցերևանի հակաոդային պաշտպանության պունկտի ծառայությունը պետք է գրավի բոլոր քաղաքացիական որգանների, ինչպես և հասարակական կազմակերպությունների հատուկ ուշադրությունը, ըստ վորում թե առաջինները և՛ թե յերկրորդները պարտավոր են առավելագույն չափով աջակցել հակաոդային պաշտպանության պունկտի ձեռնարկած միջոցառումների իրագործմանը:

II. Ընդունելով, վոր ժողովրդական տնտեսության ճյուղերը Ցերևանի հակաոդային պաշտպանության պունկտում դեռ բավականաչափ լրիվ կերպով չեն ընդգրկել հակաոդային պաշտպանության հարցերը, ի զարգացումն գոյություն ունեցող կառավարության հրատարակած վորոշումների և համաձայն Ցերևանի հակաոդային պաշտպանության պունկտի դիրեկտիվների, ողային-քիմիական հարձակմանը պատրաստ լինելու համար առաջարկում եմ՝

Բոլոր Ժողկոմատներին, կառավարական հիմնարկություններին, պրոֆեսիոնալ-հասարակական, կուլտ. կրթական և ուսումնական հաստատություններին, առևտրաարդյունաբերական, արհեստակցական, սպառողական բնակարանային կոոպերացիային:

ա) Բժշկական ոգնության գծով՝

ա) Կարողանալ ցույց տալ իրենց հասարակ, մինչ բժշկային ոգնություն:

բ) Գիտենալ չուտափույթ ոդնության մոտակա կայանների և դեղատների հասցեները:

2. Հակաոդային պաշտպանության գործով՝

ա) Կարողանալ հանդցնել հրդեհի օջախները, վորոնք առաջացել են, ինչպես կրակի հետ անդգուշ վարվելուց, նույնպես և հրդեհ առաջացնող ռումբերից:

բ) Գիտենալ բնակչության պաշտպանության հակաոդային շտաբների հասցեները և հեռախոսների №№-ները, վորոնց թաղամասում գտնվում է այս կամ այն որյեկտները, նրանցից ոգնություն խնդրելու համար, այն դեպքերում յերբ իրենց ուժերով ի վիճակի չեն հանդցնելու կրակը:

3. Հեղափոխական կարգապահություն պաշտպանելու գծով՝

ա) Կարողանալ կազմակերպել հիմնարկության ներքին պահպանությունը:

բ) Գիտենալ կառավարական որգանների և հակաոդային պաշտպանության որգանների դիրեկտիվները և պարտադիր վորոշումները հիմնարկությունների և բնակչության պարտականությունների մասին, հակաոդային պաշտպանության պայմաններում:

գ) Մշակել հրամաններ, թե ինչպիսի ներքին կարգ պետք է լինի հիմնարկություններում, «ոդային տագնապ» ազդանշանի ժամանակ և գիտենալ այդ հրահանգները:

դ) Գիտենալ միլիցիայի մոտակա պոստերը, Բ. Գ. միլիցիայի իրենց թաղամասի և բնակչության պաշտպանության մոտակա թաղամասի հասցեները և հեռախոսների №-ը:

4. Հակա-քիմիական պաշտպանության գծով՝

ա) Գիտենալ քիմիական վտանգի և նրա վերացման ազդանշանները:

բ) Կարողանալ ճիշտ գործածել հակագազը, անհատական պաշտպանության այլ միջոցները:

5. Հակաոդային պաշտպանության որգանների աջակցելու հարցում՝

ա) Սույն հոդվածում թված, հիմնարկությունները, կազմակերպությունները և այլք, պետք է բոլոր միջոցներով ոժանդակեն հակաոդային պաշտպանության որգաններին և նրա հրամանատարական կազմին:

6. Հատուկ պարտավորությունների վերաբերյալ՝

ա) Բոլոր հիմնարկությունները, ձեռնարկությունները և այլք իրենց բանվորների և ծառայողների լրիվ անձնական կազմով պարտավոր են իսկույն առանց ուշացնելու հաղորդել բնակչության պաշտպանության մոտակա շտաբին, կամ միլիցիայի մոտակա պոստին, թե իրենց որյեկտում և թե նրա չրջա-

կայքում տեղի ունեցած բոլոր դեպքերի մասին–հակառակային պաշտպանության պայմաններում (ռումբի ընկնել, խուճապ, հրդեհ և այլն)։

III. Անկախ սույն դիրեկտիվներում առաջադրած ընդհանուր ցուցմունքներից, առանձին որդաններին, հիմնարկություններին, ձեռնարկություններին և կազմակերպություններին, վորոնք ըստ իրենց առանձնահատկությունների տարբեր աշխատանք են կատարում առաջարկում եմ նախատեսել հետևյալը՝

1. Ժողկոմատներին, կառավարական, պրոֆեսիոնալ, առևտրա–արդյունաբերական, հիմնարկություններին, հասարակական կազմակերպություններին և ուսումնական հիմնարկություններին.

ա) Սահմանել ներքին կարգ. ապմինիստրատիվ ապարատի և ծառայողների համար «ռազային տագնապ» ազդանշանի ժամանակ հատմատասխան հրահանգներ մշակելով և մատակարարելով (իջեցնելով)։

բ) Կազմակերպել ինքնապաշտպանություն նայած նյութական և այլ արժեքների առկայությանը կամ այլ տեսակի կարևորություն ներկայացնելուն։

գ) Ապահովել լույսի կրկնակի (ոժանդակ) աղբյուրներով և քողարկման միջոցներով այն լուսավորվող շենքերը, վորտեղ աշխատանքը չի կարող ընդհատվել ամբողջ պունկտոր մթնացնելու դեպքում։

դ) Ոժանդակել ներքին հրդեհային դիտողությունը և ապահովել առաջնալիք կրակի ոջախների վերացումը սեփական ուժերով և միջոցներով։

2. Սպառողական կոոպերացիայի, արհեստակցական և առևտրական ձեռնարկություններին, վորոնք չեն մտնում կատեգորիաների բաժանված որյեկտների ցուցակների մեջ, առաջարկում եմ՝ «ռազային տագնապ» ազդանշանի ժամանակ նախատեսել հետևյալը՝

ա) Ընդհատել աշխատանքը և առևտուրը և ապահովել ապրանքների, մթերքների, կերերի և այլնի պահպանումը թունավորող նյութերի (գազերի) ազդեցությունից։

բ) Սեփական ուժերով միջոցներ ձեռք տալ ձեռնարկությունը պաշտպանելու և անձնական ինքնապաշտպանության համար ունենալով այդ նպատակի համար նախապես մշակված հրահանգներ։

գ) Այն արհեստակցական ձեռնարկությունները, վորոնք հակառակային պաշտպանության պայմաններում չեն կանգնեցնելու արտադրությունը, պետք է նախատեսել բոլոր մատչելի միջոցները և ձեռքի տակ դեղած նյութերը, լուսաքողարկում ապահովելու, հրդեհը հանգցնելու համար և այլն, վորպեսզի նպատակով արտադրության մեջ աշխատողնե

բից կազմակերպել բջիջներ արտադրության և անձնական պաշտպանության համար:

3. Կուլտ. կրթական կազմակերպություններին և ուսումնական հաստատություններին (ԲՈՒՀ-երին, Բ. Տ. ՈՒՆԵՐԻՆ, տեխնիկումներին, դպրոցներին, գրադարաններին- թանգարաններին, պալատներին, ակումբներին, զվարճության վայրերին, թատրոններին, կինոներին, կրկեսներին և այլն) կազմակերպել

ա) Գրադարաններին— թանգարաններին «ողային տագնապ» ազդանշանի դեպքում հավաքված մարդկանց ցրումը, հնարավորություն ստեղծելով, որ վերջիններիս կարգով և առանց խուճապի հեռացնեն շենքից: Այդ մասին նախապես հրամաններ մշակել, մասսայականացնել յուրացնել տալ և կախել հայտնի տեղերում:

բ) ԲՈՒՀ-երին, տեխնիկումներին և բոլոր տեսակի դպրոցներին խնդիր ունենալ «ողային տագնապ» ազդանշանի ժամանակ վոչ թե արձակել աշակերտներին, այլ նախապես վորոշել և նշանակել յուրաքանչյուր շենքում, լսարանում, դասարանում, բաժնում անկյունում և այլն, ուր ներքին կարգապահության համար պատասխանատու անձանց, վորոնց համապատասխան հրահանգներ է տրված և վորոնք ի վիճակի չեն վերացնելու ամեն մի խուճապային տրամադրություն:

բ) Յեթե հնարավոր չէ վերացնել խուճապը տեսական ուժերով, խնդրել մոտակա պոստի միլիցիոներին, միլիցիայի բաժնին կամ բնակչության պաշտպանության հակաողային թաղամասային շտաբի աջակցությանը:

գ) Զվարճության վայրերին՝ թատրոններին, կինոներին, ակումբներին, նախապատրաստել քաղաքացիներին կանոնավոր և անխուճապ ցրումը, ամենակարճ ժամանակամիջոցում չմոռանալով, վոր ներկա յեղողների ճնշող մեծամասնությունը, «ողային տագնապ» ազդանշանին պետք է ներկայանան հավաքակայանները:

4. Մանկության պաշտպանության կազմակերպություններին (մանկապարտեզներին, մսուրներին և այլն):

ա) Գարնանը և ամռանը, յերբ յերեխաները գտնվում են այգում, պարտեզում, հրապարակում, նախապատրաստել յերեխաների ցրումը մոտակա ծածկված վայրերում: Գլխավորապես բնակվարձկոտներում, նախապես վարժեցնելով ծնողներին թե վորտեղ են լինելու իրենց յերեխաները «ողային տագնապի» ազդանշանից հետո:

բ) Տարվա մնացած ժամանակը, յերբ յերեխաները գտնվում են ծածկված վայրերում (շենքերում) վարվել համաձայն սույն դիրեկտիվի ընդհանուր ցուցմունքներին, նախապես հնարավորության չափ նպատակահարմար կեր

պով բաշխելով յերեխաներին ամյալ տան զանազան չենքերում:

5. Բնակարանային կոոպերացիային, տնային վարչություններին, պարեհներին, դրանապաններին և յուրաքանչյուր Բնակ. վարձկոտպի բնակչության վարվել համաձայն սույն դիրեկտիվի № 1–6 կետերի, որի համար Բնակ. կոոպերացիայի վրա ընդհանրապես և յուրաքանչյուր առանձին տնային վարչության վրա պարտականություն է դրվում բնակիչներից կազմակերպել ինքնապաշտպանության խմբակներ և բջիջներ:

6. Ռադիո–կենտրոններին, պարտավորեցնում եմ՝

ա) Ընդունել «ոդային տագնապ» ազդանշանները և հաղորդել պունկտի սպասնացող ոդային վտանգի մասին տեղական տրանսլյացիոն ցանցի միջոցով:

բ) Հաղորդել քաղաքացիներին, վտանգի վերջանալու ազդանշանները:

IV. Սույն դիրեկտիվի առաջադրած բոլոր ցուցումների կատարումն ապահովելու նպատակով պարտավորեցնում եմ.

ԺՈՂԿՈՄԱՏՆԵՐԻՆ.

Զենարկել և կիրառել կազմակերպված տեխնիկական միջոցառումներ՝ հրատարակելով և մասսայականացնելով վրդովումներ և հրահանգներ նպատակի համար հակաոդային պաշտպանության գիտությունների յուրացումն և արմատացումը ժողովրդական տնտեսության յենթակա ճյուղերի վրա բանվորության և ադմինիստրատիվ ապարատի մեջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ (ՀԱՄԽ–ԻՆ)

Լայն ծավալել պաշտպանության պրոպագանդան, ուշադրության առարկա դարձնելով այս հարցը բոլոր ժողովներում, խորհրդակցությունների ժամանակ, միտինգներում, բոլոր սեմինարներում, պրոֆ. խմբակներում և կուլտուրայի պալատներում, հրատարակելով համապատասխան բրոշուրներ, թերթիկներ և այլն տարածելով պրոֆմիությենական աշխատավոր մասսայի մեջ: Ստեղծել հատուկ նշաններ և սահմանել արտոնություններ արտադրության այն հարվածայինների համար, որոնք միևնույն ժամանակ հանդիսանում են նաև հակաոդային պաշտպանության հարվածայիններ, հատուկ նշումներ անել աշխատանքի ցուցակներում:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՒԼՏ. ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.

Արմատացնել հակաոդային պաշտպանության գաղափարները աշխատավորների մեջ, նրանց ամենօրյա աշխատանքի ընթացքում: Առանձնացնել ֆոնդ հակաոդային պաշտպա-

նության լավագույն հարվածայիններին—պար դեվատրելու համար:

Հակառդային պաշտպանության հարցերն անցկացնել բոլոր կամպանիաների, տոնակատարությունների, հոբելյանների և այլն կարճատև միտինգների թերթիկների տարածման և հարց ու պատասխանի յերեկոներ կազմակերպելու միջոցով:

Իրենց հիմնական կազմակերպությունների բոլոր շենքերում, ակումբներում և այլն կախել հակառդային պաշտպանության հիմունքները մասսայականացնող պարզ և հասկանալի պլակատներ, լոզունգներ—հիշեցումներ:

ՌԱԴԻՈ ԿԵՆՏՐՈՆԻՆ.

Տեղական տրանսլյացիոն ցանցի միջոցով կազմակերպել ամենորյա ռադիո հաղորդում, հակառդային պաշտպանության նշանակության մասին, հաղորդելով համառոտ ինֆորմացիաներ լրագրական տեսություններ, գործնական առաջարկներ ինքնապաշտպանության ձևերի մասին լոզունգներ և այլն:

ՀԱՅՊԵՏՀՐԱՏԻՆ.

Ամենալայն կերպով տարածել մասսաների մեջ հակառդային պաշտպանության հարցերը, հրատարակելով հատուկ հոդվածներ, տպագրել հակառդային պաշտպանության լոզունգները բոլոր հրատարակությունների շա-

պիկների վրա, նկարազարդել անգամ դպրոցական տետրների շապիկները և այլն:

Սույն դիրեկտիվի գործադրման ժամկետը իսկույն առանց ուշացնելու և լուրջ ընդգրկելով բոլոր առաջադրած ցուցմունքները միջոցառումները

Վերադաս կուսակցական որգանների գոյությունն ունեցող վորոշումների և ցուցմունքների հիման վրա կուսակցական կազմակերպության, կոմյերիտմիության և մասսայի որգանները պետք է աջակցեն հակառդային պաշտպանության միջոցառումների իրագործմանը, լրագրերի բազմատիրաժ թերթերի, պատի թերթերի, թերթիկների միջոցով ներգրավելով այս գործին բան. թղթակիցների ցանցը:

Ցերևանի հակառդային պաշտպանության շտաբի վրա պարտականություն եմ դնում, կոնտրոլի և ստուգման միջոցով միշտ և անգամ դար հետևել սույն ցուցմունքների կատարմանը տեղերում:

Ցերևանի Հակառդային Պաշտպանության պունկտի պետի ժամ. պաշտ.՝

ՎԱՐԴԱՆՈՎ

Պունկտի կուս. լիազոր Հ. Կ. (բ) Կ. Ցերկոմից՝ ՓԱԼԱՆՋՅԱՆ

Պունկտի շտաբի պետի ժամ. պաշտոն.՝

ՅԱԲԱՅԱՆ

ՀՍՍՌ-Արմ. ՍՍՀ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

704
С 34-11
62744

13.411